ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ



Made with GAMMA

Միջնադարյան Եվրոպա

Ասիայի մասին պատկերացումները

Միջնադարում եվրոպացիների՝ Բյուզանդական կայսրությունից սահմաններից այն կողմ գտնվող Ասիայի մասին պատկերացումները հիմնված էին առանձին լուրերով, որոնք հաճախ վերածված էին լեգենդների, որ գալիս էին Ալեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների նվաճողական արշավանքների ժամանակներից: Տեղեկությունների աղբյուր էին ծառայում նաև եվրոպացի վաճառականները, որ խաչակիրների ժամանակներից սկսած առևտուր էին կատարում եվրոպացիների ու իսլամադավան ժողովուրդների մեջ:

1154 թվականին արաբ աշխարհագրագետ Ալ-Ինդրիսին, ով աշխատում էր Սիցիլիայի արքա Ռոջեր II-ի արքունիքում, գրեց այդ ժամանակ հայտնի աշխարհի քարտեզի՝ մեկնաբանությունը՝ Ռոջերի գիրքը, սակայն Աֆրիկան մասամբ էր հայտնի քրիստոնյա, ինչպես նաև արաբ ծովագնացներին, իսկ երկրագնդի հարավային մասը մնում էր չուսումնասիրված:

Made with GAMMA

Աֆրիկայի և ծովային ուղիների գիտելիքները

Չնայած այն հանգամանքին, որ Եվրոպայում պատմում էին Սահարայից այն կողմ գտնվող հսկա տերությունների մասին, եվրոպացիների գործնական գիտելիքները սահմանափակվում էին սոսկ Միջերկրական ծովի ափամերձ տարածքներով: Իսկ արաբների՝ հյուսիսային Աֆրիկան գրավելուց հետո վերջինիս ցամաքային ուսումնասիրությունը դարձավ անհնար:

Աֆրիկայի՝ Ատլանտյան օվկիանոսի ափամերձ տարածքների մասին տեղեկությունները լիարժեք չէին, իսկ դրանց աղբյուրները գլխավորապես հին հունական ու հռոմեական քարտեզներն էին, որ հիմնված էին կարթագենացիների գիտելիքների, ինչպես նաև՝ հռոմեացիների կողմից Մավրիտանիայի գրավման ժամանակ ձեռք բերված տեղեկությունների վրա:



Կարմիր ծովի մասին եվրոպացիներին հայտնի էր շատ քիչ, և միայն ծովամերձ պետությունների, հատկապես Վենետիկի առևտրականների շնորհիվ էր պատկերացում կազմվում ծովային ճանապարհների վերաբերյալ:

Made with GAMMA

Տեխնիկական նորամուծություններ

Տպագրություն

15-րդ դարում կատարված տպագրության գյուտը խթանեց տեխնիկական ու փիլիսոփայական գիտելիքների տարածումը, ավելի ու ավելի շատ էին օգտագործվում պարզ մեխանիզմներն ու էներգիայի նոր աղբյուրները:

Զենք

Գնդացիրների ու հրաձգային զենքերի ի հայտ գալը թույլ տվեց զգալիորեն անվտանգ դարձնել հեռավոր ճանապարհորդությունները:

Կարավելա

15-րդ դարում ստեղծվեց առագաստանավի նոր տիպ՝ կարավելա: Այս նավերը շատ հարմար էին ծովային երկարատև նավարկությունների համար. դրանք ոչ մեծ չափերի էին, ունեին ոչ մեծ անձնակազմ, բայց տարողունակ էին:

Քարտեզագրություն և նավարկություն

Նոր ձեռքբերումներ կային նաև քարտեզագրության բնագավառում: Քարտեզները դարձան ավելի ճշգրիտ, դրանցում նշվում էին լայնությունները, ափերի գծերը, նավահանգիստների տեղադրությունը (այդպիսի քարտեզներն ստացան պորտուլան անվանումը): Նավարկությունների ժամանակ օգտագործվում էր կողմնացույց, որի որակը նշանակալիորեն կատարելագործվեց մինչ 16-րդ դարը:

Made with GAMMA

Նոր ուղիների անհրաժեշտություն

Օսմանների կողմից Բալկանների ու Փոքր Ասիայի (ներկայում՝ Թուրքիա) գրավումից հետո եվրոպացիների համար դժվարացավ նախկին առևտրական ճանապարհներով (ցամաքային ու ծովային) երթևեկելը:

Սակայն Արևելքի հետ առևտուրը մեծ եկամուտ էր բերում (700—800% շահույթ), այդ պատճառով էլ ավելի էր մեծանում դեպի Հնդկաստան ու Չինաստան տանող ծովային նոր ճանապարհ (արևելյան ու արևմտյան) գտնելու անհրաժեշտությունը:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների ժամանակաշրջան

15–րդ դարի սկզբից 17–րդ դարի վերջը

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների կամ հետազոտությունների ժամանակաշրջանը (15–րդ դարի սկզբից 17–րդ դարի վերջը) Եվրոպայի պատմության այն ժամանակահատվածն է, երբ իրականացվեցին ծովային շրջագայություններ: Այդ ընթացքում եվրոպացիները հայտնաբերեցին նախկինում անհայտ շատ տարածքներ, չնայած շատերը արդեն բնակեցված էին:

1. **1419-1427** — Մադեյրա ատլանտյան արշիպելագ և Ազորյան կղզիներ
2. **1434** — Աֆրիկայի առափնյա շրջաններ
3. **1492-1502** — Քրիստափոր Կոլումբոսի՝ դեպի Ամերիկա ճանապարհորդություններ
4. **1498** — Հնդկաստան տանող ծովային ուղի
5. **1519-1522** — Շուրջերկրյա ճանապարհորդություն



Այս հայտնագործություններին հետևեցին բազմաթիվ ծովային շրջագայություններ Ատլանտյան, Հնդկական և Խաղաղ օվկիանոսներով և ցամաքային արշավներ Ամերիկայում, Ասիայում և Ավստրալիայում, որոնք շարունակվեցին մինչև 19-րդ դարի վերջ, իսկ 20-րդ դարում՝ Բևեռային շրջանների հետախուզում:

Made with GAMMA

Անտարկտիդայի հայտնագործումը

Ջեյմս Կուկի կազմած քարտեզը

1772թ. անգլիացի Ջ.Կուկի արշավախումբը շարժվեց հարավ, մոտեցավ Անտարկտիդային, բայց չնկատեց այն: Սառույցները ճեղքել հնարավոր չէր և վերադառնալուց հայտարարեց, որ հարավային մայրցամաք գոյություն չունի, իսկ եթե լինի էլ, ապա դա հնարավոր է միայն բուն բևեռի մոտերքում, որին հասնելը նավարկության համար անմատչելի է:



Մարդն առաջին անգամ ոտք դրեց Անտարկտիդա

1819-1821թթ. ռուսական արշավախումբը «Միրնի» և «Վոստոկ» նավերով և Ֆադեյ Բելինսհաուզենի ու Միխայիլ Լազարևի գլխավորությամբ պտտվեց անհայտ մայրցամաքի շուրջը և, **1820թ.-ի հունվարի 23-ին** առաջին անգամ մոտենալով Անտարկտիդայի ափերին, ոտք դրեց մայրցամաքի վրա:

Անտարկտիդայի բնութագրերը

14M

Մակերես

կմ² տարածք

200

Տեղումներ

մմ տարեկան

Այդ օրը մտել է պատմության մեջ որպես Անտարկտիդայի բացահայտման տարեթիվ: Անտարկտիդան համարվում է ամենացուրտ, ամենաչոր մայրցամաքը՝ ամենաուժեղ քամիներով: Անտարկտիդան համարվում է անապատ, քանի որ առափնյա խորությունը տարեկան ավելանում է ընդամենը 200 միլիմետրով, որը տարածքի համեմատ նվազ է:

Այստեղ գոյատևում են միայն ցրտակայուն օրգանիզմներ, որոնց թվում են բազմաթիվ բույսերի և կենդանիների տեսակներ (պինգվիններ, ծովահորթեր և այլն), բակտերիաներ, սնկեր, բույսեր և պրոտիստաներ: Նմանատիպ բուսականությունը բնորոշ է տունդրային:

Made with GAMMA

Քրիստափոր Կոլումբոս

1451–1506

Քրիստափոր Կոլումբոս (1451–1506), իտալացի ծովագնաց, ով իրականացրել է չորս ճանապարհորդություն՝ կտրելով Ատլանտյան օվկիանոսը Իսպանիայի Կաթոլիկ միապետների հովանու ներքո: Նա առաջինն էր Եվրոպայից, ով ճանապարհորդեց դեպի Կարիբյան ավազան, Կենտրոնական Ամերիկա և Հարավային Ամերիկա՝ սկիզբ դնելով Ամերիկայի գաղութացմանը:

Կոլումբոսը հայտնագործեց ծովային ճանապարհ դեպի Ամերիկա, մայրցամաք, որը մինչ այդ անհայտ էր աշխարհին: Չնայած նա կարծում էր, որ հայտնագործել է ճանապարհ դեպի Հեռավոր Արևելք, այդ հայտնագործությունը հիմք հանդիսացավ Ամերիկայի նվաճմանը և բնակեցմանը եվրոպացիների կողմից:

Կոլումբոսի ճանապարհորդությունը

Իսպանացի միապետների՝ թագուհի Իզաբելլայի և Ֆերդինանդ թագավորի հովանավորությամբ՝ Կոլումբոսը նավարկեց դեպի Ասիա փորձելով ուղի գտնել դեպի արևմուտք: Նրա նպատակն էր ուղիղ առևտրային կապեր հաստատել համեմունքների, մետաքսի և այլ եկամտաբեր ապրանքների համար: 1492 թվականի օգոստոսի 3-ին նա մեկնեց Իսպանիայից երեք նավերով: Այդ նավերը կոչվում էին Սանտա Մարիա, Պինտա և Նինա:

Ավելի քան երկու ամիս ծովում մնալուց հետո Կոլումբոսն ու նրա անձնակազմը հասան Արևելյան Հնդկաստան, թեև իրականում նրանք հասել էին Կարիբյան կղզիներ:

Կոլումբոսի ճանապարհորդությամբ սկիզբ դրվեց դարեր տևած գաղութացմանը և նվաճումներին՝ օգնելով ձևավորել ժամանակակից Արևմտյան աշխարհը:

> Կոլումբոսի ներդրումը շարունակում է քննարկման առարկա դառնալ: Կոլումբոսին շատ են մեծարում մահից դարեր անց, սակայն գիտնականները ուշադրություն են հրավիրում նաեւ բացասական կողմերի վրա, ինչպիսիք են նրա դերը Տաինո ժողովրդի վերացման գործում, ստրկատիրական մղումները և այլն:

Արևմտյան կիսագնդի շատ աշխարհագրական օբյեկտներ կրում են նրա անունը, ներառյալ Կոլումբիա պետությունը:

Made with GAMMA

Ֆեռնան Մագելան

Առաջին ճանապարհորդությունը ամբողջ աշխարհով

Ֆեռնան Մագելան (1480–1521), պորտուգալացի ծովագնաց:

Նրա ղեկավարությամբ տեղի է ունեցել առաջին շուրջերկրյա ճանապարհորդությունը:

Մագելանը ձգտում էր գտնել երթուղի դեպի Ինդոնեզիայի կղզիներ, որոնք բաղձալի էին իրենց արժեքավոր համեմունքների պատճառով:

Մագելանի ճանապարհորդությունը

- 1517 թ. Պորտուգալիայից մեկնել է Իսպանիա
- 1519-1521 թթ. ղեկավարել է 5 նավից կազմված իսպանական արշավախումբը, որի նպատակն էր հասնել Մոլուքյան կղզիներ
- 1520 թ. հասել է Լա Պլատայի գետաբերան, հայտնագործել Սան Մաթիաս և Սան Խորխե ծոցերը
- Անցել իր հայտնագործած նեղուցով (Մագելանի նեղուց), կտրել Խաղաղ օվկիանոսը (17000 կմ)
- Հասել Ֆիլիպինյան կղզիներ, որտեղ սպանվել է տեղացիների հետ ընդհարման ժամանակ

Արշավախմբի միայն մեկ նավ է վերադարձել Իսպանիա՝ հարավից շրջանցելով Աֆրիկան: Մագելանի նավարկությունը վերջնականապես ապացուցեց Երկրի գնդաձևությունը և Համաշխարհային օվկիանոսի առկայությունը:

Made with GAMMA

Վասկո դա Գամա

Ծովային ճանապարհորդ, ով կապեց Եվրոպան և Ասիան

Վասկո դա Գամա (1460–1524) պորտուգալացի ծովագնաց:

Նա առաջին եվրոպացին է, ով Աֆրիկա մայրցամաքը հարավից շրջանցելու միջոցով հասել է Հնդկաստան՝ հայտնագործելով դեպի այդ երկիր տանող ծովային ճանապարհը (1497-1499 թվականների ճանապարհորդության ընթացքում):

Ի տարբերություն Կոլումբոսի, դա Գաման ձգտում էր շրջել Աֆրիկայի հարավային ծայրերով և անմիջապես ծովով հասնել Հնդկաստան՝ շրջանցելով մահմեդական և վենետիկյան առևտրականների կողմից վերահսկվող ցամաքային ուղիները:

Դա Գամայի ճանապարհորդությունը

1497 թվականին դա Գաման չորս նավարկություն սկսեց Լիսաբոնից՝ նավարկելով Աֆրիկայի ափերով:

Այժմյան Սիեռա Լեոնեի ափերին հասնելով՝ դա Գաման քամիներից խուսափելու համար ուղղություն է վերցնում դեպի հարավ-արևմուտք՝ խորանալով Ատլանտյան օվկիանոսում: Հասարակածը հատելուց հետո ծովագնացներն ուղղությունը փոխում են դեպի հարավ-արևելք և 1497 թվականի նոյեմբերի 4-ին նորից հասնում են Աֆրիկայի ափերին: Ավելի քան 3 ամսվա ընթացքում նավերը բաց օվկիանոսում կտրել-անցել էին գրեթե 6000 մղոն տարածություն՝ կատարելով ժամանակի ամենաերկար ճանապարհորդությունը: